Լատինաց։ Եւ 'ի նմին աւուր հանդերձեալ էր Լատին վարդապետն գնալ 'ի Բեթղեհէմ, և ազգ արար Հայոց, եւ նոքա առաքեցին զԴիոնէսիոս վարդապետն և զայլս։ Լատին վարդապետն յանդիմանէ զՓոխանորդ տեղւոյն, եւ նա ասէ՝ զամենայն ինչ խրատով եւ հրամանաւ ձեր արարի, եւ այժմ ընդէ՞ր նշուակէք զիս առաջի Հայոց եւ Ֆէլլահայ, եւ բարկացեալ էլ եւ գնաց յԵրուսաղէմ առ փոխանորդն իբր 'ի գանկատ։ Լատին վարդապետն ասէ՝ ահա խռովայոյզ Փոխանորդն յանդիմանեալ 'ի մէնջ հալածեցաւ, եւ այլ ոչ եւս ունի դառնալ այսր։ Ժամ է արդ կարգաւորել զխնդիրն։ Ապա սկիզբն առնէ ջղոքորդ բանիւք յորդորել զՀայս դարձեալ բանալ զճանապարհն, և բանք յերկուստէք տեւեաց ժամս 2։ եւ 'ի վերջոյ չհանդուրժեալ Դիոնէսիոսի ասէ, միաբանք ձեր խենդութեամբ և բռնութեամբ Ջանային, այժմ դու սիրով կամիս խափանել զեկեղեցիս մեր։ եթէ դուք վասն միոյ վայրկենի անցանելոյ այդքան պնդէք 'ի վնաս մեր, որ հանապազ կանգնիմք աստ կատարել զհոգեւոր պաշտօնս մեր, որ տեղին մեզ յատկացեալ է, զի ասէք թէ յամենայն ժամանակի զեկեղեցին զայն ճանապարհ արարեալ եմք, բայց յորժամ պարապ էր առնէիք զայն, այլ այժմ հրամանաւ Արքայի և 'ի ձեռն ժողովոյ կալաք զիրաւունս մեր ըստ բնականին, միթէ հնար է այժմ եւ առնել, որպէս առնէիք յառաջ, զի ասէք թէ միաբանք մեր են յայլ և այլ ցեղէ, և իւրաքանչիւրն, զայլ և այլս պատճառելով յարուցանեն վէճս և կռիւս, միթէ միաբանք Հայոց չիցե՞ն այնպէս, եւ այլ սոցին նման բանք բազումք։ Եւ ինքեալ յեկեղեցին գտին զտեղին արդարեւ անպատեհ և ինքնակար Հայոց։ բայց նոքա յամառեալ աղաչէին առնել ըստ կամաց նոցին, որով չմնայր տեղի կանգնելոյ ուխտաւորաց և կարգաւորացն Հայոց, ուստի յորդորեցին զԼատինս յետս կալ 'ի խնդրոյն յայնմանէ, այլ կարգաւորք միայն անցցեն 'ի վերայ սփռոցայ, իսկ ժողովուրդքն 'ի նշանադրեալ ճանապարհէն։ Այսպէս մնաց խնդիրն մինչ 'ի գալուստ Ֆրա Մանուէլի, բայց ներքին դիտումն նոցին էր գրել 'ի Կոստանդինուպոլիս, որպէս գրեաց զայս ամենայն Թէոդորոս Պատրիարք առ գլխաւորս ազգին։